

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՂԲԱՏԻ ԴՊՐՈՑԻ ՄԻ ԳԼՈՒԽ ԳՈՐԾՈՑ

(ԴԵՏԱՆԻՆԻ Ա. Ի Ե Տ Ա Ր Ա Ն Բ)

Դր.

Այժմ անցնինք մանրանկարչութեան նկարագրութեան. սկզբում 6ր — 7ա, 8ր — 9ա, 10ր — 11ա, 12ր — 13ա, 14ր — 15ա, խորաններն են, կամար եւ կոչուած, յունաբէն ռամքա բառի փոխառութեամբ։ Առաջին զոյլը վերից վար եւ իրար կցուած երեք կիսաշրջանակներն են, որոնց միջի տարածութեան վերայ զրուած է եւսերիսի և Կարպիւնսուի թղթակցութիւնը։ Կիսաշրջանները անմիջապէս եղերգ չըջանակները կապոյտ են, երկու ոսկիեզերի մէջ, չըջափակուած կարմրագիծ մի քառանկիւնում։ Այս քառանկիւնու և կիսաշրջանների մէջ եղած տարածութիւնը ձածկուած է կանաչ եւ կապոյտ աղիւսանման զարդերով, իրարից բաժանուած ոսկիզերով։ Այս քառանկիւնին չըջանակուած է զարձեալ մի աւելի մեծ քառանկիւնի եղերազարդով, որի մատիւներն են մէջ լնդ մէջ եռատերերի և հնգատերերի մի շարք, կապուած իրար հետ ցողուններով, եռատերենները բոլորակի մէջ, իսկ հնդատերենները ներքեւից փոքրիկ աղեղներով կապուած նրանց հետ։ Եռատերենների ներքերի զոյլ թերթերը կապոյտ են, եղերուած սպիտակով, իսկ վերեկի տերեւ, որ բարձրանում է երկուսի միջից, կանաչ տերեւների հպման երկու անկիւններում մի մի կարմիր զնդակ։ Հնգատերեւի ներքեւի զոյլը ըստ ամենայնի նման եռատերեւի ներքեւի զոյլ տերեւններին, իսկ նրանցից ծլած կանաչ տերեւնները որածայր։ Երկու կանաչ տերեւի մէջ տեղում մի կարմիր տերեւ։ Շրջանակի ձախ թեր մէջ տեղում մի զարդեակ, կանաչ եւ կապոյտ տերեւններով, պորտում կարմիր զնդակ։ Վերեի անկիւններում մի մի երկար և ոճաւորած հնգատերենով զարդ։ Ներքեւի տերերը կապոյտ, միջինն մասում հիւսկէն զարդով։ Խոյակի յատակը զարդարուած է, անկանոն բ. յորս երեքն Մաթէսո, Մարկոս, Պուկաս, Յովհաննէս» իսկ 9ա. ականոն Բ. յորս երեքն Մաթէսո, Մարկոս, Պուկաս» զրուած։ Առաջին խորանը հաստատուած է երեք սեան վրայ, խորիսիների տակ մի գերանածեւ՝ զարդարուած երկարածիկ օղակների շղթայով։ Խորիսինի յատակն աւելի լայն է, տափակ եւ իրար վերայ դրուած պլիտաներով, ներքեւից վեր հետզեաէ նեղանալով։ Վերջին օղակածեւ պլիտայի վերայ բարձրանում է սեան բռնը, ոչ բոլորակ, այլ տափակ երեսով, ուրեմն քառանկիւնի, միջին մասում հիւսկէն զարդով։ Խոյակի յատակը զարձեալ տափակ է, իսկ բռն զարդը իրար կողած երկու նշատերեւ, ծայրերը հակառակ ուղղութեամբ, որոնց վերայ զրուած է երկու պլիտան իրեւ հիմք սիւների վերայ ձգուած գերանի։ Միջին սեան բռն խոյակը զնդակածեւ է, երկու պլիտայի մէջ, իսկ վերիսին էլ իւր վերեին մասում օղակով չէ փակուած, այլ բռնը խրուած է պարզ և տափակ պլիտայի մէջ։ Միւների զլսին


կարմիր, տերենների հայ ժան տեղերում մի մի կարմիր զնդակ։ Ճակատի զարդը կաղմաւած է արմաւենիկից։ Բոլորավին այն կաղմութիւնն ունի և 7ա., միայն այս տեղ աղիւսածեւ զարդերը անկիւնից անեկիւն կտրուած, խաչածեւ թեք զծերով, հուպ տուած քառանկիւնների մէջ։ Ներքեւի լուսանցքի եղերազարդն էլ ցողունների հիւսուածք է։ Արտաքին չըջանակեների երկիրը ծածկուած ոսկեփոշով, բայց արդէն զունատուած և մասամբ թափուած։ Աւելի հետոքքքական են 8ր — 9ա. իրար նմանութիւն բերող խորանները, (պատկեր 1), իւրաքանչիւրը 21×14 սմ. մածութեամբ, բռն խորաններից չափուած, 8ր — ի լիւնեաի մէջ ականոն Ա. յորս ըստ նսուին ածան չորեքին. ածան Մաթէսո, Մարկոս, Պուկաս, Յովհաննէս» իսկ 9ա. ականոն Բ. յորս երեքն Մաթէսո, Մարկոս, Պուկաս» զրուած։ Առաջին խորանը հաստատուած է երեք սեան վրայ, խորիսիների տակ մի գերանածեւ՝ զարդարուած երկարածիկ օղակների շղթայով։ Խորիսինի յատակն աւելի լայն է, տափակ եւ իրար վերայ դրուած պլիտաներով, ներքեւից վեր հետզեաէ նեղանալով։ Վերջին օղակածեւ պլիտայի վերայ բարձրանում է սեան բռնը, ոչ բոլորակ, այլ տափակ երեսով, ուրեմն քառանկիւնի, միջին մասում հիւսկէն զարդով։ Խոյակի յատակը զարձեալ տափակ է, իսկ բռն զարդը իրար կողած երկու նշատերեւ, ծայրերը հակառակ ուղղութեամբ, որոնց վերայ զրուած է երկու պլիտան իրեւ հիմք սիւների վերայ ձգուած գերանի։ Միջին սեան բռն խոյակը զնդակածեւ է, երկու պլիտայի մէջ, իսկ վերիսին էլ իւր վերեին մասում օղակով չէ փակուած, այլ բռնը խրուած է պարզ և տափակ պլիտայի մէջ։ Միւների զլսին

ձգուած է զերանը, և զերուած երկու կողմանից բարակ եւ հանգուցաւոր զծով, իսկ միջին տարածութիւնը ծածկուած է զոյդ պարանների հիւսուածքով, պառոյտնների մէջ մի մի կարմիր զնդակով։ Մէջ տեղի ունեն զլիսին լիւնեան է երեքքառորդական կամորի տակ. կամարի ճակատը զարդարուած եռատերեւի եւ հնդատերեւի իրար յաջորդող շարքով։

Բուն խորանը քառանկիւնի է, որի ներքեւ շրջանակը սիւների զերայ ընկած զերանն է, իսկ երեք կողքերից կապոյտ փոնի զերայ արմաւենիկի եռաճի զերով։

բուած։ Վերին անկիւնների զարդերն էլ, զրսից, արմաւենիկի եռատերեւ է, միջինը սուր եւ կարմիր զնդակներով տերեւների հպաման տեղերում։

Բայց աւելի ուշադրութեան արժանին արտաքին լուսանցքի (8 բ.) երկու մարդկային ֆիգուրներն են (պատկեր 1). մէկը ներքեւի, միւսը զերեւի զերանի զերայ կանգնած։ Դոցանից ներքեւինը, 11 մմ. մեծութեամբ, հագած է երկար պարեզօտ, մէջքում զօտեսքում, թէև չի երեսում այն հազուստի ծալքի տակ ծածկուած լինելով։ Հազուստի բուն զոյնը զորչ զեղին է, բայց



(պատկեր 1)

զարդեր։ Քառանկիւնու անկիւններում ներսից՝ մի մի զէյերածե զարդ կայ, մէկն էլ ճակատում, որտեղից երկու ճառագայթաշերտեր ուղղուած են դէպի ներքեւի անկիւնները, և զերուած կապոյտ զծերով, իսկ նրանց միջի տարածութիւնը ոսկի փոնի զերայ պարանահիւսի ոլորտապտոյտով զարդարուած։ Եման մի ճառագայթ էլ զերեւի անկիւններից ուղղուած են դէպի լիւնետով։ Ճակատի զարդարածութիւնից դուրս մի հնդատերեւ է, երեք կարմիր զնդակներով, տանուած բոլորակի մէջ, իսկ շուրջը արմաւենիկի կանաչ տերեւներով զարդա-

զարդարուած երկու՝ կարմիր, զերան սեւագիծ զարդերով ծածկուած՝ ժապաւէնով, որ զօտկատեղից մինչև քզանցքի ծայրն է հասնում, իրեւ հագուստի անմիջական մաս և ոչ ազատ, և զերուած սկ զծերով։ Հազուստի ծալքերը յետեւի կողմից ձևակերպուած են չնորհալի կերպով, սկ ու զորչ գծիկներով։ Գոտկից բարձր նոյնաէս երեւում են կարմիր ժապաւէնածե զարդերը, որ ուսի զերայից աջից ձախ կտրում է կուրծքը եւ ապա կողքից իջնում մինչեւ զօտին, որ հազուստի բացուածքի և կոճկուելու ուղղութիւնն է ցոյց տալիս։ Նոյն

ժամանակների զարգը տեսնում ենք եւ թիւերի վերայ, որ իշխանական ծագման նշանն էր հին ժամանակում, հետագայում դառնալով ընդհանուր զարդ։ Ուսերի վերայից նոյնպէս երեսում է այդ կարմիր կտորը, բայց առանց գծազարդերի, եղերուած միայն ու զծով։ Կուրծքը և թևերի փերին մասը բռն հագուստի կտորից է, բայց առեղնակործուած բռնակնան զարդերով։ Գլխին զրել է բարձր սեւ երկճիւղ զլխարկ. ճակատը, ինչպէս բաժանուած մասերը ներսից, զարդարուն. զլխարկի յետի մասի (ճիւղի) զլխին մի ցցուն զարդով։ Գլխարկի, ինչպէս և հագուստի ընդհանուր ձեւակերպութիւնը նման Զաքարէ եւ Իւանէ սպասալարների պատկերաքանդակին՝ Հառիճոյ վոնքի արեւելեան պատին (տ. մեր Խաղարկեանք կամ Պոռշշանք աշխատութեան շապիկը):


Դէմքն առանց մազերի, բռնորակ, քիթը, աչքերն ու յոնքերը գեղեցիկ ձեւակերպուած։ Ճակատի վերայ զլխարկի տակից երեսում են գանգուրների երկու փունջ, իսկ կուրծքի վերայ իջնում են երկու սեւ ժապաւէններ, որոնցմով կապուած են յետնից, կարծում ենք, մազերը, այս երեւոյթը նկատելի է և լուսանցքի միւս ֆիգուրների նկատմամբ, որոնց մոսին խօսք կ'լինի. մանաւանդ, որ մազերը շագանակագոյն են, իսկ երկու ժապաւէնները սեւ թերը վերջանում են նեղ և կարմիր բազապանով, որ նոյնն է, ինչ որ միւս մասերում տեսանք։ Չախ ձեռքում բռնածէ զարդարուն և ծոպաւոր սրբիչ մը կամ թաշշինակ. այս մի և նոյնը նկատելի է նաև վերեի պատկերի մէջ, նուև կիլիկեան ըըրջանի արքայական պատկերներում։ Աջ ձեռքով բռնած ուսին է զրել մի կեռագլուխ փայտ, կեռից մի ձուկ կախուած։ փայտը կարմիր է, ուրեմն, ներկուած։ Վերեւը գրուած է փոքր երկաթազրով։ «Ենքնիկ քանի գաս ձուկն բեր»։

Կոչիկները երկու զլխաւոր զոյն ունին, կարմիրն ու գեղնաւունը. ճիտկի առաջին մասը կարմիր է, իսկ յետեինը գեղնաւուն, ու զծով ստուերած։ ճիտկերի վերեի մասում կապերն էին, որոնց սեւ ծոպերը կախուած են ճիտկերի յետեի կողմից։ Ոտքերի մասը գեղնաւուն է, իսկ կրունկը մինչև ոլոքները կարմիր, զարձեալ սեւ զծո-

րով իրարից բաժանուած։ Կոչիկները կրունկ չունին, որի նմանը զործածական է մինչեւ այժմ էլ Վրաստանում։ Անդրվարտիկը, բնականաբար, չի երեւում, անցրած էր ճիտկենի մէջ։

Պարանոցի տակ երեւում է սպիտակ շապիկը, պարանոցի և կուրծքի բացուածքը երեւուած սեւ զծերով։

ՊԱՐԵԿԻՆ ՄՐԹԵՊԱ. ՅՈՎԱԼԵՓԵԱՆ
(Ճարունակելի)



ԵՂԻՇԵ ՎԱՐԴԱՊԵՏ

553 թուի Դուինի ժաղովի կողմէն Աղեքսանդրիա ուղարկուած հայ կրօնաւորաներէն մէկն էր նաև կրօնական ընտիր ճառաերու հեղինակ եղիչէ վրդ. որ եւ Զ. Դարու պատմէիչը կը հանդիսանայ. միայն թէ անոր պատմութեան նիւթը դարձեալ ե. զարի հայի զիւցազնական զործերը կը կազմեն, ինչ որ արդէն Փարագեցին մանրամասն պատկերացուցած էր. Եթէ ընդունինք, որ 553 թուերին եղիչէն 15 տարեկան կրօնաւոր էր, պէտք է որ ծնած մինի 528 թուին, հաւանօրէն Խշտունեաց երկրի գիւղերէն մէկում, որու վիճակաւոր Ռշտունեաց Սահակ հազ.ը կարեւոր զեր կատարեց այդ ժամանակները։ Իր բոլոր զրուածներու մէջ նա Աղեքսանդրեան ուսումը կը յեղիեղէ, զնելով զատուող եկեղեցականներու բերանը կամ զաւանական թղթերու մէջ՝ Փիլոնի մտքերը։ 565 թուերուն իր ընկերներու՝ Մովսէս Խորենացու, Դաւիթ Անյազթի, Վրթանէս քերթողի և ուրիշներու հետ Հայաստան դարձաւ մի աղմը կալից ժամանակ, երբ Հայ եկեղեցին երկպառակուած էր Սիւնեաց եւ Աղուանից պատճառով, և նեստորականութիւնը նոււանումներ կը կատարէր։ Միւս կողմէն ալ Յունաց նենգամիտ սաղբանքներով տիրող Պարսից իշխանութեան դէմ հայ մեծամեծներու կողմանէ խլրատումներ տեղի ունեցան, երբ մանաւանդ իշխանութիւնը Պարսիկներու համար Դուինի մէջ ատրուշան շինեց, որ իր իրաւունքն էր կատարելապէս։ Հայ հոգեւորականութեան զը-